

ցոյց տայ թէ ո՞ր կողմն է ուղիղ ճանապարհը. նրա յետեից մէկը, միւսը, երրորդը կը գնան նրա հետքով և այդպիսով ճանապարհ բաց կանեն, որով հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ կը գնան և այդ կը դառնայ մի լայն ճանապարհ. Քրիստոս այդ անուանում է կեանքի ճանապարհ. Գնանք նրա յետեից, քայլենք նրա հետքով. նրա հետքերով շաւիղ բաց անենք դէպի յաւիտենական կեանքը. դրանով կը գնան մեզնից յետոյ նաև ուրիշները և այդպիսով շաւիղը կը դառնայ մեծ, լայն ճանապարհ. Մեր նեխած ճահճոտ ցածութիւնից փրկիչը կանչում է մեզ դէպի Աստուծոյ բարձրութիւնը. Գնանք նրա յետեից:

Մամբրէ վարդապետ.

ՀՈԳԵԿԱՆ ԿՈՒԽ

(Բարութեան սերմերից).

Հին յայտերը մի երևելի հետադարձ ունէին Դիմութենէս անունով. Երբ նա խօսում էր հրապարակում՝ աղգային ժողովի առաջ, ամբոխը լաքուած ուշադրութեամբ լսում էր նրան ամբողջ ժամերով. նրա չգօրեղ, պարզ ձայնը լսւում էր ամենահեռաւոր կարգերում, խօսքերը թափւում էին սահուն, գլխի և ձեռների շարժումները խիստ վայելուչ էին, գեղեցիկ և լրացնում էին խօսքերի տպաւորութիւնը. Սակայն Դիմութենէս առաջի անգամ դուրս գալով ժողովրդի առաջ խօսելու՝ խայտառակ անյաջողութեան հանդիպեց. նրան հրամայեցին լռել, ամբիոնից վռնդեցին (որտեղից նա փորձում էր խօսել) և ծաղրելով ճանապարհ գցեցին հրապարակից. Դիմութենէսը տուն դարձաւ՝ ամօթից գլուխը վերարկուով ծածկած. ճանապարհին նրա յետեից հասաւ մի անծանօթ.

— Սիրելի պատանի, ասաց նա, այսօր քեզ խիտ ծաղրի ենթարկեցին և իսկապէս տեղն էլ էր, դու շատ վատ խօսեցիր, քո ձայնը թոյլ է, տասը— տասն և հինգ քայլից չի կարելի լսել, դու շուտ շուտ կակաղում ես, կանգ առնում շունչ քաշելու համար։ Դու անկանոն ես արտասանում մի քանի խօսքեր և, վերջապէս, խիտ ծիծաղելի կերպով քաշքշում ես ուսերդ և ձեռքերովդ անշնորհ չարժուժներ անում։ Այն ինչ՝ քո մէջ կայ հոգեւորի գրաւականներ, ես շատ ճառեր եմ լսել և տեսնում եմ որ քեզանից բան դուրս կգայ, պէտք է միայն աշխատես քո վերայ։ Առանց վարժուելու չի կարելի նստել խրտնոզ ձիու վրայ, թէ չէ վայր կգցի, հապա ինչպէս էիր ուզում թամբել հաղարաւոր ամբօխին ստիպել նրան հետեւել քեզ, դործել քո նշանին նայելով, երբ ինքդ չես պատրաստուել, չես սովորել խօսքով ազդելու ժողովրդի վրայ։ Իւրաքանչիւր արուեստ՝ բացի բնական ընդունակութիւնից, պահանջում է դեռ ևս վարժութիւն, ինքնակրթութիւն, եթէ ինքդ քեզ վրայ աշխատես, քեզանից լաւ հոգեւոր դուրս կգայ։

Դիմութենէսը լսեց բարի խորհուրդը, վճռեց անդուլ աշխատութեամբ ազատուել պակասութիւններից։ Որպէս զի ոչ մի բան չգրաւի իրան, չխանդարէ դործին, նա հեռացաւ մի անապատ տեղ, ծովի ափին գտնուող մի առանձնացած խրճիթ և որպէս զի չգայթակղուի, ժամանակից առաջ քաղաք չվերադառնայ, նա գլուխը բոլորովին ածիլեց։ Առանձնութեան մէջ նա սկսեց իւր ձայնը մշակել, զօրեղացնել և թոյլ կուրծքը դարգացնել։ Դրա համար նա աշխատում էր վաղելով սար բարձրանալ՝ առանց շնչելու, անդադար կանչելով։ Սկզբում՝ նա կարողանում էր վաղել ճանապարհի մի փոքր մասը միայն, յետոյ ստիպուած էր քիչ քիչ կանգ առնել և հանգստանալ։ Այդպիսով որքան աւելի վարժւում էր, նոյնքան աւելի հեռու կարողանում էր վաղել և, վերջապէս, կարողացաւ բարձրաձայն աղաղակով՝ առանց շունչ քաշելու բարձրանալ սարի ամենաբարձր գագաթը։

Չայնը զօրեղացնելու համար նա փոթորկի ժամանակ, երբ ծովը գոռում էր և սպառնալից շառաշմամբ ժայռերին դիպչում, դուրս էր գալիս ամի և աշխատում էր իր ձայնով ծածկել փոթորկի գոռոցը, արիքների գոռոցը խլացնում էր Դիմոսթինէսին, բայց ձայնը քանի գնում ուժեղանում էր և վերջ ի վերջոյ կարող էր մրցել աղմկայոյզ ծովի գոռոցի հետ։

Կակաղելու դէմ Դիմոսթինէսը սովորութիւն արաւ լեզուի տակ քար դնել, նա լեզուն այնքան պտրտեցնում էր, մինչև որ խօսքը կանոնաւոր դուրս գար։ Այդպիսով նա սովորեց խօսել կատարելապէս պարզ և սահուն։ Մնում էր մոռացութեան տալ ուսերը ծիծաղելի կերպով շարժելու սովորութիւնը, Դիմոսթինէսը դրա դէմ էլ գտաւ ամենապարզ միջոց։ Նա իւր ցածիկ խրճիթում առաստաղին ամրացրել էր մի սուր՝ ծայրը դէպի վայր և ինքը կանգնում էր այնպէս, որ ուսը լինէր ուղիղ սրի տակ։ Յետոյ ենթադրելով որ իւր առաջ ժողովուրդ է կանգնած, բարձր ձայնով սկսում էր ճառախօսել։ Քանի մըտքումն էր, որ ուսը չպէտք է բարձրացնէ, ճառը լաւ էր առաջ գնում, բայց հէնց որ ճառով սգեօրութեամբ մոռանում էր և ուսը բարձրացնում, այն ժամանակ ուսը դգալի կերպով ծակում էր, մի, երկու, քսան-երեսուն անգամ ծակեց իւր մարմինը՝ մինչև արիւն դուրս գալը, այն ժամանակ դադարեց ուսերը բարձրացնելուց։

Կէս տարուայ մէջ ամենամ գլուխը ծածկուեց մազով, Դիմոսթինէսը վերադարձաւ քաղաք, գնաց ժողովատեղին, բարձրացաւ ամբիոն, սկսեց ճառախօսել։ Ժողովուրդը յիշեց նրա առաջի անյաջողութիւնները, սկսեց ծիծաղել, բայց Դիմոսթինէսը բարձր, իշխանական ձայնով դադարեցրեց ծիծաղը։ Ամբիոնը լսեց և խելացի ու պերճախօս ճառը սկսեց արտահոսուիլ ինչպէս լայն ջրառատ գետ։ Հրապարակի ամենահեռաւոր անկիւններում ձայնը լսում էր պարզ, շարժումները սահուն էին, գեղեցիկ։ Ժողովուրդը ամսոսաց, երբ ճառը վերջացաւ։ Դիմոսթինէսը դարձաւ հռչակաւոր հռետոր։ Նա այդպէս երկար և շատ

աշխատեց իւր վրայ, որպէս զի սովորի գեղեցիկ խօսել
 և գառնայ հռչակաւոր հռետոր, իսկ գեղեցիկ վարուել
 եւ ապրել սովորելու, լաւ մարդ դառնալու համար
 մարդս պէտք է աւելի ևս աշխատանք թափի իւր վրայ։
 «Անօրէնութեամբ յղացաւ և ի մեղս ծնաւ զիս մայր իմ»
 ասում է սաղմոսերգու Դաւիթը։ Մենք ծնունում ենք
 բազմազան կոպիտ և կեղտոտ գրաւականներով։ Ինչպէս
 մի քանի ծանր հիւանդութիւնների, այսպէս և շատ վատ
 սովորութիւնների մենք ժառանգաբար ենք ստանում։
 Ծնողներից երեխաներին են անցնում ոչ միայն նրանց
 մարմնական, այլ և հոգեկան նմանութիւնները։ Պապերը
 շատ չար սովորութիւնների ստացել են իրանց նախորդնե-
 րից և իրանց առակութեամբ, վատ ցանկութիւններին
 յագուրդ տալով՝ այդ սովորութիւնները արմատացրել են
 իրանց մէջ և իրանցից ևս նորերը աւելացրել։ Այդ բո-
 լորը տուել են մեր հայրերին, նրանք ևս իրանց հերթին,
 իրանց ընդունածը աւելի ևս արմատացրել և իրանցից
 էլ մի բան աւելացրել են. ուրեմն ճիշդան չար սերմեր
 կան մեր մէջ։ Հետեւապէս մեր հոգին ոչ թէ մաքուր, այլ
 վատ սերմերով թանձրապէս կեղտոտուած հող է։ Երբեմն
 ընկնում է հոգուդ մէջ բարի սերմ՝ Աւետարանի ընթերց-
 մունքն է շարժում քեզ կամ եկեղեցական երգեցողու-
 թիւնը յափշտակում, կամ խելացի մի գիրք հրապուրում
 և կամ, վերջապէս, լաւ օրինակն է գրաւում—այդ բո-
 լորը խեղդւում է չարութեան թանձր որոմների մէջ։ Շատ
 աշխատանք, վատ հակումների և սովորութիւնների դէմ
 կռուելու կամքի մեծ ոյժ է պահանջում, որ մեր հոգին
 տրամադրենք բարի կեանքի, գեղեցիկ գործերի։ Մի հին
 իմաստուն ասել է «Մարդը, եթէ նա ուզում է լինել
 ճշմարիտ մարդ, և ոչ մարդկային կերպարանքով կոշտ
 գազան, պէտք է իւր վրայ աշխատի այնպէս, ինչպէս կա-
 շուեգործը կաշուի վրայ»։ Կաշուեգործը երկարատեւ աշ-
 խատութեամբ հաստ և կոշտ կաշուից պատրաստում է
 նուրբ և բարակ լայկա, այդպէս և մարդս, եթէ նա ու-
 ղում է լինել բարեգործ պէտք է երկար և շատ աշխատի

իւր վերայ: Ինչպէս աշխատի: Առաջի պայմանը այն է, որ պէտք է լինի ուշադիր իւր ներքին աշխարհին: Մենք շատ յաճախ իմանում ենք ամենահեռաւոր քաղաքների հրապարակները և փողոցները և չենք ճանաչում մեր սեպհական սիրտը: Մեր ամբողջ կեանքում աշխատում և հոգում ենք մեր տնտեսութիւնը կամ ծառայութիւնը բարեկարգելու մասին և առհասարակ մեր դրսի գործերի մասին ենք մտածում միայն և երբեմն տարիներով խելք-ներին չի դալիս մտածել արդեօք ամեն բան կարգին է մեր ներսում: Մեր ներքին աշխարհը մեզանից շատերի համար կատարելապէս խաւարապատ է և մենք այնտեղ, ինչպէս թանձր մառախուղի մէջ, ոչինչ չենք կարող որոշել: Մեզ քիչ է օգնում նոյն իսկ մեր խիղճը: Մեր խիղճը ոչ իւր մօտ մէկը կարողանայ դալ հրապուրելու և ոչ ինքը խաբուի որտի մղումից և երթայ հին ճանապարհով:

Սուրբն Մակարիոս եգիպտացին տեսիլք էր տեսել: Նրան երեւեցաւ չարութեան ոգին ամեն կողմից կախած սւնենալով զանազան գայթակղութիւններ այնպէս, ինչպէս որսի գնացող որսորդը կամ ձկնորսը:

— Ինչո՞ցու են այդ բաները, հարցրեց ճգնաւորը:

— Մարդկանց համար հրապոյրներ են, պատասխանեց չարութեան աստուածը, մէկին մի բան եմ առաջարկում, միւսին մի ուրիշ բան: Մարդիկ վրայ են տալիս, ես էլ այն ժամանակ քարչում եմ նրանց դէպի ինձ, ինչպէս ձկնորսը կարթով քարչում է ձկանը:

— Եւ շատերն են ընկնում:

— Տեղ կայ շատ, տեղ էլ կայ քիչ: Այս լոպէին ես գնում եմ մի ընտանիքի մօտ. յամառ մարդիկ են, չեն հրապուրւում. միայն մէկը կայ, որ հոտառութեամբ զգալով մօտենալս ուրախութիւնից չգիտէ թէ ի՞նչ անէ, ինքն էլ ընդ առաջ գալիս:

Ս. Մակարիոս փնտրեց այն մարդուն և համոզեց նրան չենթարկուել գայթակղութիւններին, ինքն իրան յաղթել, մաքից դէն ձգել, նրանց մոռանալ:

Այդպէս պէտք է վարուենք և մենք:

Մէկը ցաւեցրել է քեզ, վիրաւորել, սիրադ ես է գալիս, չարութիւնը կրակ է կտրել: Եթէ միշտ մտածես վիրաւորանքի մասին, աւելի և աւելի բարկութիւնդ կը բորբոքուի. դրա մասին մտածել նոյնն է, ինչ որ կրակի վրայ փայտ ձգելը, աւելի լաւ է աշխատիր յիշել այդ եօք այդ քեզ վիրաւորողի հետ լաւ լոպէսներ չե՞ս անցկացրել, արդեօք մի բանով չի կարելցել քեզ և կամ արդեօք ինքդ դրանից առաջ նրան չե՞ս վիրաւորել, չե՞ս ցաւացրել: Այդպիսի մտքերը զայրութի տաքութիւնը կսառեցնեն, չարութեան կրակը կհանգչնեն:

Դիցուք յարմար դէպք է ներկայանում ծուռ ճանապարհով օգուտ ձեռք բերել, մտածիր արդեօք ո՞րն է թանկ մի բանի մանէթը, մարդկանց գովասանքը, ծահայելի է, որ անդրադարձնում է մեր հոգու ծռութիւնը և սրտի աժեն մի բիծը. բայց հայելին որքան էլ մեծ լինի և լաւ, այնուամենայնիւ մթութեան մէջ ոչ մի ծառայութիւն չի կարող անել: Անհրաժեշտ է մեր հոգու մթին սենեակը լուսաւորել և, այս դէպքում, Աստուծոյ խօսքով լուսաւորել: Աստուծոյ արդարութեան լուսով նայելով՝ մենք կտեսնենք, որ մեր սիրտը Աստուծոյ տաճար չէ, ինչպէս որ պէտք է լինէր՝ առաքեալի խօսքի համաձայն: Դուք ինքնին տաճար Աստուծոյ էք և հոգին Աստուծոյ բնակի ի ձեզ, այլ այր աւաղակաց է, ինչ որ անանցանելի անտառ՝ լի ամենատեսակ դաղաններով և կենդանիներով: Ահա խորամանկութիւնը աղուէսի պօչով, ահա արիւնքուշտ առիծի կասաղութիւնը, սիրամարդի պարծենկոտութիւնը ու գոռոգութիւնը, ահա դայի ագահութիւնը, խողի կեղտոտութիւնը և կրիայի ծուլութիւնը: Մի խօսքով կոչտ դաղանային զգացմունքների մի ահագին բոյն: Նրանց զօգելու միակ միջոցն է— սովատանջ անել նրանց, կերակուր չտալ, ինքն իրան անսանձ չթողնել, չլսել, չհպատակել վատ զգացմունքներին: Վատ զգացմունքներն ու հակումները կաղմուտ են ոչ թէ միանգամայն, այլ աստիճանաբար: Մեծ հրդեհը սկսում է չնչին կայծից, ահագին ծառը աճում է փոքր սերմից, պէտք է

հագեցի կայծը հանգչեցել, և ծառը արմատախիլ անել իւր սաղմի մէջ։ Մեծ ծովերի ափին օրուայ օրոշ ժամերին լինում են մակընթացութիւններ և տեղատուութիւններ։ Մակընթացութեան ժամանակ ջուրը սկսում է բարձրանալ և ափը հեղհեղել ամբողջ վերստերով։ Ով որ մակընթացութեան ժամանակ ափին պատահի, ջրի բարձրանալը տեսնելուն պէս շտապով մի կողմ է հեռանում։ Պէտք է մենք ևս մի կողմ հեռանանք, երբ նկատում ենք, որ այս կամ այն վատ զգացմունքը օրոշ պայմաններում կարող են մեծանալ, աճել և մեղ հեղհեղել։

Ս. Մարիամ եղիպտացին, երբ զղջալով զգաց իւր ցոփ կեանքի այլանդակութիւնը, փախաւ անապատ՝ գայթակղութիւններից հարկւրաւօր վերստ հեռի, որպէս զի ապրութեան մէջ բարձրանալը, թէ մաքուր խիղճը, ներքին աշխարհը՝ «Զինչ օղտիցի մարդ, ասում է Փրկիչը, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի և զհոգին իւր կորուսցէ»։

Երբ որ և է հոտ մեղ-գուր չի գալիս, մենք քթներս սեղմում ենք, երբ անհաճոյ ձայներ ենք լսում, ականջներս փակում, երբ որ և է երեւոյթ սարսափեցնում է մեզ, աչքերս ենք գոցում։ Այդպէս պէտք է վարուել և վատ զգացմունքների ու հակումների դէմ։

Ի հարկէ այդ դժուար բան է. այդ իսկ պատճառով Փրկիչը նախազգուշացնում է որ Աստուծոյ արքայութիւնը ոյժով կառնուի և միմիան ոյժ դորժադրողները կտիրեն նրան։

Դեմոսգենէսը որ հեթանոս էր լաւ խօսել սովորելու համար երկար ամիսներ ինքն իւր վրայ աշխատեց, ինչպէս կաշուեգործը կաշուի վրայ, միթէ մենք քրիստոնեաներս կլախենանք ներքին աշխատանքից՝ Աստուծոյ կանոնով ապրել սովորելու համար։

Ժամանակ է ձեռք զարնել դործի, ժամանակ է մաքրել մեզ։ Ամեն տեսակ հոգեկան կեղտոտութիւններ շատ ենք ստացել ժողանդաբար, շատ էլ ինքներս ենք աւելացրել ուրեմն այդպէս էլ պէտք է շարունակենք, աւելի խորասուզուենք տղմի մէջ, թէ երբ և իցէ, վերջապէս, պէտք է կանգ առնենք, աշխատենք ցեխի միջից դուրս գալու։

Պետրովից քարզմ. Գրիգոր Բնկ. Նոր-Արեւիսանց.